

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ (ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ) ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՀՈՈՄԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

ՎԱՅԵ ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

Յուրաքանչյուր հասարակական-իրավական երևույթի, այդ թվում՝ դատական վերանայման ինստիտուտի էությունը բացահայտելու համար նախևառաջ անհրաժեշտ է այն ուսումնասիրել զարգացման տարբեր փուլերի փոխկապվածության մեջ՝ առանձնացնելով երևույթի գործառույթյան հիմնական և ընդհանուր օրինաչափությունները: Մարդկային հասարակության զարգացմանը զուգընթաց՝ հասարակական կյանքում անընդհատ առաջ են գալիս նոր իրավական երևույթներ, իրավունքների պաշտպանության նոր կառուցակարգեր, որոնք անպայմանորեն պետք է ճանաչողության ինքնուրույն օբյեկտ դառնան: Ընդ որում, դատական վերանայումը՝ որպես իրավական երևույթ, անքակտելիորեն կապված է պետության և իրավունքի առաջացման ու զարգացման ողջ ընթացքում տեղի ունեցող իրավաքաղաքական բնույթի այնպիսի վերափոխումների հետ, որոնք պայմանավորում են հասարակական հարաբերություններում սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության առանձնահատկությունները:

Դատական վերանայման ինստիտուտի ծագման և զարգացման օրինաչափությունների ուսումնասիրության համար որպես ելակետ պետք է ընդունել հատկապես այն իրավական համակարգերը, որոնք դրվել են տարբեր պետությունների, այդ թվում՝ հայրենական իրավունքի առաջընթացի, իրավական մշակույթի տարրերի փոխառության և կատարելագործման հիմքում: Հետևաբար՝ այս առումով առավել հատկանշական է Հին Հռոմում իրավունքների պաշտպանության առանձին ինստիտուտների, մասնավորապես՝ դատական վերանայման առանձնահատկությունների ուսումնասիրությունը, քանի որ այս իրավական մշակույթի բազմաթիվ տարրեր փոխառվել և ռեցեպցիայի են ենթարկվել այլ պետությունների իրավական համակարգերի և մշակույթների կողմից: Անհերքելի է, որ ժամանակակից ռոմանագերմանական (մայրցամաքային) իրավական համակարգի ձևավորման հիմքը հենց հռոմեական իրավունքն է, որն անտիկ աշխարհի, միջնադարի և նոր ժամանակների իրավական մտքի և մշակույթի հիմնական կապող օղակի դերն է ստանձնել: Պատահական չէ, որ դատական վերանայման ինստիտուտի և հատկապես վերաքննության կամ վերաքննիչ դատավարության ծագումը իրավաբանական գրականության մեջ կապվում է հենց հռոմեական իրավունքի հետ¹:

Քաղաքացիական դատավարության ամենահին տեսակը և 12 ադյուսակների օրենքով հռոմեական իրավունքում նախատեսված դատավա-

¹ Տե՛ս Салогова Е. В. Римский гражданский процесс. 2-е изд., М., 2002, էջ 3:

րության առաջին ձևը լեգիսակցիոն (լատիներեն՝ legis actio, հայերեն թարգմանությամբ՝ օրինական հայց) դատավարությունն էր, որը բաղկացած էր երկու փուլից՝ «in jure» և «in iudicio» դատավարություններից², և ավարտվում էր դատավորի կողմից հետևյալ որոշումներից որևէ մեկը կայացնելով՝

- հաստատել այս կամ այն իրավունքի գոյության կամ բացակայության փաստը (դեկլարատոր որոշում),
- ճանաչել հայցապահանջի հիմնավորվածությունը և բավարարել հայցային պահանջները (կոնդեմնատոր կամ մեղադրական որոշում),
- մերժել հայցվորի պահանջները (աբսալյուտար կամ արդարացնող որոշում):

Սակայն լեգիսակցիոն դատավարության արդյունքում դատարանի կողմից կայացված որոշումները վերջնական էին և բողոքարկման ենթակա չէին³:

Հանրապետության դարաշրջանի վերջում լեգիսակցիոն դատավարությանը պատմականորեն հաջորդեց ֆորմուլյար դատավարությունը, որը ևս ներառում էր «in jure» և «in iudicio» փուլերը: Ի տարբերություն լեգիսակցիոն դատավարության՝ ֆորմուլյար դատավարությունը զուրկ էր ձևականություններից և ավելի շատ գործնական բնույթ էր կրում: Կողմերն իրենց պահանջները և դրանց հիմքում ընկած հանգամանքները ներկայացնում էին պրետորին, որը վեճի իրավական հանգամանքների և լուծման կարգի վերաբերյալ գրավոր բանաձև (ֆորմուլա) էր կազմում՝ հասցեագրված դատավորին⁴: Դատավորը քննում էր գործի միայն փաստական կողմը, իսկ իրավական հանգամանքների զննահատման պատասխանատվությունն ամբողջությամբ ընկած էր պրետորի վրա: «In jure» փուլում դատավարությունն ավարտվում էր մագիստրատի գրավոր հրամանով, որով երդվյալ դատավոր էր նշանակվում և միաժամանակ նշանակված դատավորին ցուցում էր տրվում, թե ինչպես պետք է լուծել գործը: Ֆորմուլան բաղկացած էր հինգ հիմնական մասերից. iudicis nominatio մասից, որով նշանակվում էր գործը քննող դատավորը, demonstratio (դեմոնստրացիա) մասից, որով ձևակերպվում էին հայցվորի պահանջները, intentio (ինտենցիա) մասից, որտեղ նշվում էին հայցային պահանջները հիմնավորող փաստերը, condemnatio (կոնդեմնացիա) մասից, որը հայցը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ ցուցում էր՝ ուղղված դատավորին, adjudicatio (ադյուդիկացիա) մասից, որը պարտադիր էր գույքի բաժանման վերաբերյալ գործերով⁵:

² Տե՛ս **Борисова А. Е.** Апелляция в гражданском (арбитражном) процессе (изд. второе, исправленное и дополненное). М., 2000, էջ 7-9:

³ Տե՛ս **Վ. Դ. Ավետիսյան**, Հռոմեական մասնավոր իրավունք, Եր., 2010, էջ 187-188:

⁴ Այս փուլում դատավորն ամբողջությամբ կախվածության մեջ էր գտնվում մագիստրատից, և պրետորը կարող էր դադարեցնել դատավարությունը կամ նույնիսկ արգելել վերջինիս որոշում կայացնել (suscipere iudicium): Դատավարությանը կարող էր միջամտել ուրիշ պրետոր, որը վետոյի իրավունք ուներ և կարող էր վերացնել գործը ընկերոջ որոշումները (intercessio):

⁵ Ֆորմուլայում առանձնացնում էին նաև լրացուցիչ կամ ոչ պարտադիր՝ prescriptions (հայցի բավարարման պարագայում առաջացող իրավական հետևանքների որոշակիացում), exceptions (հայցի դեմ ներկայացված առարկություններ), replication (պատասխանողի առարկությունների դեմ հայցվորի պատասխանները) մասերը:

Հիմք ընդունելով հռոմեական իրավունքի աղբյուրների ուսումնասիրությունը՝ Վ. Ավետիսյանը նշում է, որ եթե կողմը համաձայն չէր դատարանի որոշման հետ, ապա իրավունք ուներ բողոքարկելու այն վերադաս դատավորին: Ընդ որում, բողոքը ներկայացվում էր որոշումը կայացրած դատավորին, որը երեք օրվա ընթացքում կազմում էր հաղորդագրություն և այն տրամադրում էր բողոքարկողին՝ բողոքը վերադաս դատավորին ներկայացնելու համար, որն արդեն կրկին վերանայում էր գործը⁶:

Խնդիր չունենալով հանգամանալից վերլուծելու ֆորմուլյար դատավարությանը կայացվող որոշումների իրավական բնույթն ու մյուս առանձնահատկությունները՝ հարկ է նշել, որ այն նախատեսում էր դատարանի որոշումների վերանայման իրավաբանական հատուկ կառուցակարգ: Հետևաբար՝ *դատական ակտերի վերանայման ինստիտուտը և բողոքարկման իրավունքի տարրերն առկա էին նաև ֆորմուլյար դատավարությունում*, թեպետ իրավաբանական գրականության մեջ այն վերագրում են էքստրաօրդինար դատավարությանը և նշում, որ ֆորմուլյար դատավարությունում դատական ակտերի բողոքարկման տարրերի առկայության հետ մեկտեղ բացակայում էր «վերադաս» և «ստորադաս» դատական ատյանների դասական բաժանումը⁷: Փաստորեն, իրավաբանական գրականության մեջ արտահայտված տեսակետները (օրինակ՝ Վ. Ավետիսյանի և Ե. Սալոգուբովայի) երբեմն հակասում են միմյանց:

Ամեն դեպքում պետք է նշել, որ վերադաս դատական ատյանների գոյությունը կամ դատական համակարգի աստիճանակարգությունը դատական վերանայման և դատարանի որոշումների բողոքարկման իրավունքի իրականացման հիմնական կարևորագույն նախադրյալներն են, սակայն դատական վերանայման ինստիտուտի գոյությունը չի կարելի պայմանավորել միայն այս հանգամանքով: Հենց նույն ֆորմուլյար դատավարությունում դատական վերանայման ինստիտուտի մասին է վկայում հռոմեական իրավունքում դատարանի որոշումների վերացման կամ դրանք չեղյալ ճանաչելու հնարավորության առկայությունը՝ *revocatio in duplum*, երբ կողմը մագիստրատից պահանջում էր վերացնել ոչ ճիշտ ձևով կայացված և ոչ իրավաչափ դատական որոշումը⁸: Ընդ որում, կողմերը նման պահանջով մագիստրատին կարող էին դիմել դատարանի կողմից որոշումը կայացնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում: Մագիստրատը կարող էր բավարարել կողմի պահանջը և թույլատրել վերանայումը կամ էլ մերժել *revocatio*-ն: Մերժելու պարագայում *revocatio in duplum*-ով հանդես եկող կողմը որպես տույժ պետք է վճարեր դատարանի որոշմամբ բավարարված հայցագնի կրկնապատիկը:

Բավականին հետաքրքրական է *restitutio in integrum ob dolum* (սկզբնական կամ նախկին վիճակի վերականգնում)՝ իրավունքի պաշտպանության հատուկ միջոցը, երբ վերացվում էր ոչ միայն դատարանի որոշումը, այլև չեղյալ էին ճանաչվում այդ որոշմամբ սահմանված հետևանք-

⁶ Տե՛ս Վ. Դ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 193-194:

⁷ Տե՛ս Салогубова Е. В., նշվ. աշխ., էջ 55-58:

⁸ Տե՛ս Пухан Иво, Поленак-Акимовская Мирьяна, Римское право (базовый учебник). Перевод с македонского д.ю.н., проф. В. А. Томсинова и Ю. В. Филиппова / Под ред. проф. В. А. Томсинова. М., 2000, էջ 345-346:

ները: Այսպես՝ դատարանի որոշումը (*iudicatum*) կարող էր վերացվել պրետորի կամ վերադաս մագիստրատի ինտերդիկտի⁹ միջոցով, եթե հաստատվում էր, որ գործը քննող դատավորը որոշումը կայացրել էր սպառնալիքների կամ հարկադրանքի ազդեցության տակ (*metus*), հաստատվում էր խաբեությունը¹⁰ կամ դատավորի կաշառված լինելու հանգամանքը, հայցվորի անչափահաս լինելը, եթե նրա անփորձությունը հակառակորդին հնարավորություն էր տվել շահելու գործը (*minor aetas*), հարգելի պատճառներով դատարան չներկայանալը (*absentia*) և այլն: Այսինքն, դատավարությունում պարտվող կողմը, վիճարկելով դատարանի որոշումը, պետք է ապացուցեր վերջինիս առաջինությունը¹¹: Եթե առաջինը էր *litis contestatio*-ն (վեճի առարկան պարզելը), ապա դատավարության ընթացքում պարտվող հայցվորը կարող էր նորից հայց հարուցել՝ ապացուցելով նախկինում գործի քննության ընթացքում թույլ տրված խախտումների առկայությունը:

Ծիշտ է, ֆորմուլյար դատավարությունում չէր գործում վերաքննության ինստիտուտը, սակայն դատական ակտերի վերանայումն այս փուլում պետք չէ կապել վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացման հետ: Դատական վերանայման արդյունքում համապատասխան հիմքերի առկայության պարագայում կարող էր վերացվել գործը քննող դատարանի որոշումը և *restitutio in integrum*-ի միջոցով վերականգնվել կողմերի միջև սկզբնապես առկա հարաբերությունները: Համեմատականներ անցկացնելով գործն ըստ էության լուծող դատական ակտերի բեկանման՝ մերօրյա օրենսդրությամբ սահմանված իրավական հետևանքների և հռոմեական իրավունքում առկա իրավական հետևանքների միջև՝ կարող ենք ասել, որ դատարանի որոշմամբ սահմանված իրավահարաբերությունները՝ *revocatio in duplum*-ի և *restitutio in integrum ob dolum*-ի արդյունքում անվիճելից նորից դառնում էին վիճելի: Ընդ որում, դատական վերանայման այս տարբերակը բավականին ընդհանրական գծեր ունի ոչ լրիվ վերաքննության և վճռաբեկության ինստիտուտների հետ, քանի որ նշված բոլոր դեպքերում հիմնականում գործ ունենք անօրինական դատական ակտերի բեկանման (վերացման) հետ, երբ համապատասխան դատական ատյանների որոշումները ոչ միայն անմիջականորեն կարգավորում են վիճելի նյութական իրավահարաբերությունները, այլև ստուգում են գործն ըստ էության քննած դատարանի ակտի իրավաչափությունը:

Բացի դրանից, գործն ըստ էության քննած և լուծած դատարանի կողմից իր իսկ կայացրած ակտի վերանայման հնարավորությունը խորթ չէ նաև ժամանակակից իրավական համակարգերին, որոնք ևս վերանայումը

⁹ Սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության հատուկ միջոց, որը շահագրգիռ անձի պահանջով պրետորի կամ մագիստրատի կողմից կայացվող հրահանգ էր՝ ուղղված նոր իրավահարաբերություններ առաջացնելուն, գոյություն ունեցողները պահպանելուն կամ նախկին իրավահարաբերությունը վերականգնելուն:

¹⁰ Հին Հռոմում խաբեությունը ոչ միշտ էր դատարանում իրավական հետևանքներ առաջացնում (մանրամասն տես **Колосова О. Г.** Искусство судебной лжи (по Квинтилиану). «Древнее право». IVSANTIQUVM. № 1(4), М., 1999, էջ 99-108):

¹¹ **Степ Дождев Д. В.** Римское частное право. Учебник для юридических вузов и факультетов / Под общ. ред. Академика РАН, доктора юридических наук, профессора В. С. Нерсесянца., 2-е изд., изм. и доп., М., 2000, էջ 239:

չեն պայմանավորում միայն վերադաս դատական ատյանների գործունեությամբ: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի¹² 2007 թ. փոփոխությունների հետևանքով նոր և նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտը վերանայում էր համապատասխան ակտը կայացրած առաջին ատյանի դատարանը՝ գործին մասնակցող անձանց դիմումների հիման վրա (204⁹ հոդվ., մաս 1-ին, լր. ՀՕ-277-Ն, 20.12.07, ՀՀՊՏ 66 (590), 26.12.07): Ինչպես տեսնում ենք, հռոմեական իրավունքում *revocatio in duplum*-ի և *restitutio in integrum ob dolum*-ի ինստիտուտները մի շարք ընդհանրություններ ունեն ՀՀ քաղաքացիական դատավարությունում 2007 թ. փոփոխություններով նախատեսված նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի հետ: Վերանայվել կարող էին միայն դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտերը (ՔԴՕ 204⁹ հոդվ., մաս 2-րդ): Ընդ որում, Հին Հռոմում վեճը լուծված էր համարվում հենց դատարանի կողմից որոշումը (*sententia*) կայացնելու պահից՝ *res iudicata* (*Mod.*, 7 *pand.*, D. 42, 11), իսկ պրետորի էրիկտով արդեն ձեռք էր բերում պարտադիրություն (D. 42, 1, 4, 3): Սակայն Հայաստանում նոր երևան եկած հանգամանքներով կարող են վերանայվել ինչպես գործն ըստ էության լուծող, այնպես էլ միջանկյալ դատական ակտերը: Վերանայման պահանջով Հին Հռոմում պրետորին կարող էին դիմել կողմերը, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարություն՝ գործին մասնակցող անձինք: Երկու դեպքերում էլ օրենսդրությամբ սահմանված են վերանայման պահանջով իրավասու պետական մարմին դիմելու համար նախատեսված կոնկրետ ժամանակահատված և այլն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարող ենք վստահաբար նշել, որ ֆորմուլյար դատավարությունում դատական համակարգի աստիճանակարգության բացակայության պայմաններում բացառված չէր դատական որոշումների վերանայումը և վիճարկման արդյունքում իրավասու պաշտոնատար անձի կողմից դրանք չեղյալ ճանաչելը (իհարկե, միայն որոշակի հանգամանքների առկայության պարագայում): Ընդ որում, սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության հատուկ միջոցները կարող էին բավարարել այս շրջանում քաղաքացիական շրջանառության պահանջները: Սակայն, դատական վերանայման ինստիտուտը հռոմեական պետության քաղաքական և իրավական համակարգի զարգացմանը զուգընթաց, անընդհատ կատարելագործվել և փոփոխությունների է ենթարկվել, ինչն առավել ցայտուն դրսևորվել է էքստրաօրդինար դատավարությունում, երբ արդեն կարող ենք խոսել դատական ատյանների վերադասության և աստիճանակարգության մասին:

էքստրաօրդինար (*cognito extraordinaria*) դատավարության առաջացումն իրավաբանական գրականության մեջ կապում են Հռոմեական կայսրության (սկսած մ. թ. 294 թ.) հաստատման հետ, որի հիմնական ինստիտուտները ոչ միայն պահպանվեցին, այլև կատարելագործվեցին և լուրջ առաջընթաց ունեցան միապետության ողջ ժամանակաշրջանում: էքստրաօրդինար դատավարությունում վերադաս դատարանի կողմից բողոքի

¹² Ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1998 թ. հունիսի 17-ին (այսուհետ՝ ՔԴՕ):

հիման վրա դատական ակտի վերանայման առաջին կարևոր նախադրյալը դատական ատյանների աստիճանակարգային համակարգի ստեղծումն էր, երբ դատական և վարչական գործառույթները կենտրոնացան վարչական-կառավարչական մարմինների՝ պետական աստիճանավորների կամ պաշտոնատար անձանց ձեռքում, ինչը հնարավորություն ընձեռեց դատարանի գործառույթ իրականացնող ստորադաս ատյանների (օրինակ՝ մունիցիպալ մագիստրների) որոշումները (վճիռները) բողոքարկելու առավել բարձր ատյաններ: Քանի որ կայսրության ժամանակաշրջանում իշխանությունների ճյուղերի դասական տարանջատում չկար, հռոմեական պետության դատարանակազմությունը նույնանուն էր պետական կառավարման մարմինների համակարգի հետ¹³: Այստեղ դատական ատյանները գործում էին կայսրի, որը միապետության գերագույն դատավորն էր, կայսերական բանակի հրամանատարի (praefecti praetorio), քաղաքների պրեֆեկտների (praefecti urbi)¹⁴, պրովինցիալների և դիոցեզների կառավարիչների, մետրոկոմիանների համայնքային դատավորների (judices podanei) աստիճանակարգությամբ: Կայսրի որոշումները վերջնական էին և բողոքարկման ենթակա չէին: Ընդ որում, բողոքարկման հնարավորությունը բացակայում էր նաև կայսերական բանակի հրամանատարի կայացրած վճիռների պարագայում, քանի որ վերջինս դատարանի գործառույթներ իրականացնող երկրորդ պաշտոնյան էր, որոշումները կայացնում էր կայսրի անունից (այստեղ խոսքը պատվիրակված լիազորությունների մասին է) և գործերը քննում էր պրինցեպսի կարգով: Քաղաքների պրեֆեկտների վճիռները կարող էր վերանայել կայսրը, իսկ ստորադաս ատյանների վճիռները վերանայվում էին պրինցեպսի՝ ավելի բարձր դատական ատյանի կողմից:

Ինչպես նշում է Ռ. Գ. Պետրոսյանը, Հուստինիանոսի օրոք (527-565 թթ.) կայսրն իրավունք ուներ գործեր քննել նաև անմիջականորեն շահագրգռված անձանց խնդրանքով, որն էլ հենց ստացավ «վերաքննության խնդրանքներ» (ապելիացիաներ) անվանումը¹⁵: Այդուհանդերձ, մ. թ. երրորդ դարի վերջին արտակարգ դատավարությունում վերաքննությունը («վերաքննություն» եզրույթն առաջացել է լատիներեն appellatio/ appellare -«դիմել», provocatio - «դիմում» բառից)¹⁶ համապատասխանում է դատական վերանայման ինստիտուտի վերաբերյալ ժամանակակից պատկերացումներին:

Խնդրո առարկայի լուսաբանման տեսանկյունից կարելի է նշել, որ արտակարգ դատավարությունում *դատական և վարչական գործառույթները համատեղվում և իրականացվում էին կառավարման մարմինների կողմից, որոնց միջև հաստատվել էին իշխանական ենթակարգության*

¹³ Տե՛ս Пухан Иво, Поленак-Акимовская Мирьяна, նշվ. աշխ., էջ 352:

¹⁴ Խոսքը Հռոմի և Կոստանդնուպոլսի պրեֆեկտների մասին է, որոնց իրավասությունը տարածվում էր քաղաքի շուրջ 160 կմ շառավղով:

¹⁵ Տե՛ս Ռ. Գ. Պետրոսյան, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Եր., 2007, էջ 534:

¹⁶ Տե՛ս, օրինակ, «Большой юридический словарь». Под ред. А. Я. Сухарева, В. Е. Крутских. 2-ое изд., перераб. и доп. М., 2001, էջ 33: Իրավաբանական գրականության մեջ «appellatio» եզրույթը պարզաբանվում է նաև որպես «ճառով դիմել» կամ «խնդրանք ճառով» (տե՛ս Коршунов Н. М., Мареев Ю. Л. Гражданский процесс. Учебник для вузов. М., 2004, էջ 637):

վրա հիմնված հարաբերություններ, իսկ դատական համակարգ ներդրվեց վերադասության սկզբունքը, հետևաբար՝ ցածրաստիճան պաշտոնյայի կայացրած որոշումը վերադասության կարգով կարող էր բողոքարկվել վերադաս պաշտոնյային:

Պետք է նշել, որ վերաքննիչ բողոքարկումը հնարավոր էր իրականացնել թե՛ բանավոր՝ դատավորի կողմից ակտը կայացնելուց անմիջապես հետո, թե՛ գրավոր (libellus appellatorius)՝ մոտակա օրերի ընթացքում¹⁷: Ավելին՝ Ի. Պուխանը և Մ. Պոլենակ-Ակիմովսկայան նշում են, որ վերաքննիչ բողոքարկումն իրականացվում էր վճռի կայացումից անմիջապես հետո, սակայն բողոքի հիմքերն ու հիմնավորումները գրավոր ձևով ներկայացվում էին վճիռը կայացրած դատավորին 2-3 օրվա ընթացքում¹⁸:

Սրանից հետևում է, որ բոլոր դատավարական գործողությունների կատարման գրավոր ձևը պահպանելը պարտադիր չէր: Բացի դրանից, անհրաժեշտ է տարբերել գրավոր դատավարական գործողությունների կատարումը և դրանք արձանագրելը: Բանավոր կատարվող դատավարական գործողություններին արձանագրությամբ գրավոր ձև էր հաղորդվում: Սակայն արտակարգ դատավարությունում իրավական հետևանքներ կարող էին առաջացնել բանավոր կերպով կատարվող գործողությունները (իհարկե եթե օրենսդրությամբ նախատեսված էր նման հնարավորություն և թույլատրվում էր դրանց բանավոր կատարումը), այլ ոչ թե դրանք արձանագրելու փաստը:

Այսպիսով, դատական որոշման հրապարակումից հետո դժգոհ կողմն օրենքով սահմանված ժամկետում և կարգով դատավորին հայտարարում էր բողոքարկելու իր մտադրության մասին: Բողոքարկումից հետո ակտը կայացրած դատարանը որոշում էր վերաքննության թույլատրելիության հարցը: Եթե վերաքննությունը համարում էր թույլատրելի, ապա հաղորդագրություն էր պատրաստում և այն տրամադրում բողոքարկողին՝ վերադաս ատյան ներկայացնելու համար: Ընդ որում, վճիռը կայացրած դատարանը կարող էր ընթացք չտալ բողոքին և հաղորդագրություն չպատրաստել, եթե բողոքարկումն ակնհայտորեն դատավարությունը ձգձգելու և դատական ակտի կատարումը հետաձգելու նպատակ էր հետապնդում: Սակայն վերաքննիչ բողոքարկումը չթույլատրելու մասին որոշումները ևս ենթակա էին բողոքարկման: Ավելի ուշ բողոքարկման թույլատրելիությունը հավաստող փաստաթուղթը դատավորը կողմին էր տրամադրում 30 օրվա ընթացքում՝ առանց որևէ միջնորդության:

Վերաքննիչ բողոքարկման հետևանքով դատական ակտն ուժի մեջ չէր մտնում, և դրա կատարումը հետաձգվում էր: Գործի քննության արդյունքում վերաքննիչ ատյանը կամ բողոքը մերժելու մասին որոշում էր կայացնում, կամ էլ կայացնում էր գործն ըստ էության լուծող նոր դատական ակտ, որը փոխարինում էր առաջին ատյանի դատարանի որոշմանը: Այստեղից հետևում է, որ արտակարգ դատավարությունում վերաքննությունն իր իրավական բնույթով ավելի մոտ էր ժամանակակից իրավագիտության մեջ ընդունված լրիվ վերաքննության տեսակին: Վերաքննիչ ա-

¹⁷ Ст'ю Дождев Д. В., Գշվ. աշխ., էջ 246:

¹⁸ Ст'ю Пухан Иво, Поленак-Акимовская Мирьяна, Գշվ. աշխ., էջ 354:

տյանը իրականացնում էր գործն ըստ էության կրկնակի քննելու և լուծելու գործառույթ: Ընդ որում, եթե նախկինում կայսրը որոշում էր կայացնում միայն գործը քննած դատավորի և գործին մասնակցող անձանց գրավոր բացատրությունների հիման վրա, այսինքն՝ քննված գործի նյութերի հիման վրա, ապա Յուստինիանոսի կառավարման օրոք վերաքննությունը դրվեց այլ հիմքերի՝ կողմերին լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու հնարավորություն ընձեռելու և դատական նիստում դրանց անմիջական հետազոտության արդյունքում որոշում կայացնելու վրա: Փաստորեն, վերաքննիչ ատյանում կողմերը կարող էին ներկայացնել լրացուցիչ (նոր) ապացույցներ, որոնք չէին հետազոտվել ստորադաս դատական ատյանի կողմից: Հռոմեական վերաքննիչ դատավարությունում գործում էր «tantum devolutum quantum appellatum» (որքան բողոք, այնքան վճիռ) սկզբունքը, որն ուղղակի կապի մեջ էր գտնվում «non reformatio in pejus» (դեպի վատթարը շրջադարձի արգելք) կանոնի հետ: Այսինքն՝ ստորադաս դատարանի ակտը բողոքարկած կողմի վիճակը վերաքննության արդյունքում չէր կարող վատթարանալ՝ ի համեմատ այն դրության, որը վերջինս ձեռք էր բերել ստորադաս դատարանի կողմից գործի քննության արդյունքում կայացրած ակտով: Բացի դրանից, Յուստինիանոսի ժամանակաշրջանում սահմանափակվեց վերաքննիչ բողոքարկմամբ գործերը երեքից ավելի ատյաններում քննելու հնարավորությունը¹⁹:

Բավականին հետաքրքրական է գործի քննության ընթացքում կողմերի պատշաճ վարքագիծն ապահովելու և իրավունքների իրականացման չարաշահումների կանխմանն ուղղված իրավական երաշխիքների առկայության հանգամանքը: Մասնավորապես՝ վերաքննիչ ատյանում բողոքարկողի պարտության պարագայում նրա նկատմամբ կարող էին կիրառվել որոշակի սանկցիաներ ոչ իրավաչափ բողոքարկման համար՝ ընդհուպ մինչև երկու տարով աքսոր՝ ունեցվածքի կեսի բռնագրավմամբ:

Վերաքննիչ ատյանում ստորադաս դատարանի կողմից գործերի քննության օբյեկտիվությունը, ինչպես նաև դատավարական գործողությունների կատարման օրինականությունը ստուգելու հնարավորության ապահովման նպատակով հռոմեական քաղաքացիական դատավարությունում հատկապես կարևորվեց դատական նիստի արձանագրումը, քանի որ այլ կերպ հնարավոր չէր գործին մասնակցող անձանց բանավոր փաստարկները նույնությամբ հասանելի դարձնել վերադաս ատյանին:

Դատական նիստի արձանագրումը ներկայումս էլ որոշիչ նշանակություն ունի վերադաս ատյանների կողմից ստորադաս դատարանների՝ գործն ըստ էության լուծող ակտերի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու հարցում: Ավելին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228 հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ վճիռը ենթակա է բողոքարկման բոլոր դեպքերում, եթե գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը:

¹⁹ Օգոստոս կայսրի օրոք դատարանների վճիռները կարող էին բողոքարկվել քաղաքային պրետորին, պրետորիաների ղեկավարներին, իսկ եթե գործն անցել էր բողոքարկման բոլոր ատյանները, ապա թույլատրվում էր դատական ակտը վերացնելու խնդրաքով դիմել նաև կայսրին (տե՛ս Салогубова Е. В., նշվ. աշխ., էջ 79, Новицкий И. Б. Римское право. М., 1993, էջ 41):

Հին Հռոմում աստիճանական դատական համակարգի առաջացման, ինչպես նաև արտակարգ դատավարությունում վերաքննության ինստիտուտի զարգացման ընթացքի մասին կարող ենք ասել հետևյալը.

- վերաքննիչ բողոքարկումը դիտվում էր որպես վերադաս դատական ատյանին գործի փաստական և իրավական հանգամանքները վերանայելու մասին խնդրանք,

- բողոքարկման համար սահմանված էր կոնկրետ ժամանակահատված²⁰,

- դատական համակարգի խիստ աստիճանակարգության ներդրման հետևանքով սահմանափակված էին վերաքննիչ ատյանները (յուրաքանչյուր գործ պետք է անցներ առավելագույնը երեք ատյանի քննություն),

- բողոքարկումն իրականացվում էր իրավաբանական որոշակի ընթացակարգով,

- բողոքարկման հետևանքով առաջին ատյանի դատական ակտն օրինական ուժի մեջ չէր մտնում,

- թույլատրվում էր հակընդդեմ բողոքարկում,

- վերաքննիչ ատյանը գործն ամբողջ ծավալով ըստ էության կրկնակի քննող դատարան էր,

- վերաքննիչ դատարանը գործի քննության արդյունքում կայացնում էր նոր դատական ակտ:

Ի. Օ. Պոդվալնիի կարծիքով, հռոմեական իրավական համակարգի զարգացման այս փուլում վերաքննության կարգով դատական ակտերի վերանայմանը բնորոշ էին այնպիսի առանձնահատկություններ, որոնք վկայում էին այս ինստիտուտի կազմավորման սկզբնական փուլի մասին: Այդ առանձնահատկությունները հանգում էին հետևյալին`

- վերաքննիչ բողոքարկման իրավունք ունեցող անձանց անհարկի լայն շրջանակը (ինչպես գործին մասնակցող, այնպես էլ շահագրգիռ այլ անձինք)²¹,

- վերաքննիչ բողոքին կից ներկայացվում էր դատավորի հաղորդագրությունը` կայացված ակտի հիմնավորվածության պատճառաբանությամբ,

- ընդհանուր կանոններով բողոքարկման անվճար լինելը,

- վերաքննիչ բողոքը կարող էր ներկայացվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր²²:

Պետք է նշել սակայն, որ թվարկված հանգամանքները վերաքննության անկատարություններ համարելն այնքան էլ ճիշտ չէ, քանի որ Հռոմի իրավական համակարգի զարգացման այս փուլում այն լիովին կարող էր

²⁰ Սկզբնական շրջանում բողոքարկումը պետք է իրականացվեր դատական ակտի հրապարակումից անմիջապես հետո, իսկ բողոքի գրավոր հիմնավորումը` եռօրյա ժամկետում: Հետագայում Հուստինիանոսը սահմանեց բողոքարկման տասնօրյա ժամկետ:

²¹ Ցանկացած շահագրգիռ անձ ասելով նկատի ունենք ոչ միայն այն անձանց, ովքեր մասնակից չեն դարձվել դատավարությանը, և որոնց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ դատարանը վճիռ է կայացրել (մանրամասն տես **Покровский И. А.** Частная защита общественных интересов в Древнем Риме. «Древнее право». IVSANTIQUVM. № 2(5), М., 1999, էջ 190-201):

²² Տես **Подвальный И. О.**, նշվ. աշխ., էջ 14:

բավարարել քաղաքացիական շրջանառության մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության համապարփակ կառուցակարգերին բնորոշ չափանիշները: Այն է՝ կայացված դատական ակտի հետ համաձայն չլինելու պարագայում վեճի կողմերը կարող էին դիմել վերադասատյան՝ ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու պահանջով: Վերադասատյան դիմելու ընթացակարգը բավականին մատչելի էր և հասանելի, ինչպես նաև երաշխավորված էր սեփական տեսակետը ներկայացնելու և փաստարկները հիմնավորելու հնարավորությունը: Վերադասատյանի կողմից գործի քննությամբ կայացվող ակտն անմիջականորեն ուղղված էր կողմի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությանը (բողոքը բավարարելու և նոր դատական ակտ կայացնելու դեպքում՝ բողոքարկողի շահերի պաշտպանությանը, իսկ մերժելու պարագայում՝ մյուս կողմի իրավունքների պաշտպանությանը):

Վերլուծելով պատմական զարգացման տարբեր փուլերում (մ. թ. ա. 754-242 թթ. մագիստրատների և պրետորիատի հաստատման հին հռոմեական իրավունքի շրջան, մ. թ. ա. 242-մ. թ. 212 թթ. ստրկատիրական պետության (հանրապետության) պրետորական կամ դասական հռոմեական իրավունքի շրջան, 212 - 565 թ. թ. կենտրոնացված իշխանության, միապետության և ընդհանուր կայսերական իրավունքի հաստատման կամ հետդասական շրջան) հռոմեական իրավական համակարգում սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության կառուցակարգերը, այդ թվում՝ դատական վերանայման ինստիտուտի առանձնահատկությունները, կարող ենք ենթադրել, որ վերաքննության ծագումը պայմանավորված էր պետական իշխանության կենտրոնացման պարագայում կառավարման մարմինների կողմից դատական ատյանների որոշումների նկատմամբ վերահսկողություն հաստատելու և վերադաս դատական ատյանի գործառույթներն իրականացնելու, դատական ակտի հետ համաձայն չլինելու դեպքում դրա դեմ բողոք (վերաքննիչ) բերելու հնարավորությունն ապահովելու, ինչպես նաև բնակչության մեջ դատարանների նկատմամբ անվստահության առկայության պարագայում նոր՝ առավել բարձր ատյանի առաջացման անհրաժեշտությամբ:

Ամփոփելով շարադրվածը՝ կարող ենք ասել, որ Հին Հռոմում դատական ատյանների աստիճանակարգության համակարգի ներդրմամբ արտակարգ դատավարությունում ձևավորվեց ժամանակակից իրավաբանական համապատասխան դասական վերաքննության ինստիտուտը: Վերադաս դատական ատյանների գոյությունը կամ դատական համակարգի աստիճանակարգությունը դատական վերանայման և դատարանի որոշումների բողոքարկման իրավունքի իրականացման հիմնական կարևորագույն նախադրյալներն են, սակայն դատական վերանայման ինստիտուտի գոյությունը չի կարելի պայմանավորել միայն այս հանգամանքով: Դատական վերանայում հնարավոր է իրականացնել թե՛ դատական համակարգի աստիճանակարգության, թե՛ նման աստիճանակարգության բացակայության պայմաններում: Դատական ակտի բողոքարկման իրավունքը և դատական վերանայման ինստիտուտը ամրագրվելով հռոմեական իրավունքում, հետագայում ռեցեպցիայի է ենթարկվել այլ իրավական համակար-

գերի կողմից և դրվել է մայրցամաքային իրավական ընտանիքի պետությունների քաղաքացիական դատավարությունների հիմքում:

Բանալի բառեր – *դատական վերանայում, հռոմեական իրավունք, լեգիսակցիոն դատավարություն, ֆորմուլյար դատավարություն, դատական համակարգի աստիճանակարգություն, էքստրաօրդինար դատավարություն, վերաքննիչ բողոք, լրիվ վերաքննություն, վերաքննիչ ատյան, դեպի վատթարը շրջադարձի արգելք, դատական նիստի արձանագրում*

ВАГЕ ОГАНЕСЯН – *Функционирование института пересмотра (апелляции) судебных актов в древнеримском праве.* – В статье проанализированы механизмы защиты субъективных прав на разных этапах римской правовой системы, включая институт судебного пересмотра. Введение в Древнем Риме системы иерархии судебных инстанций сформировало в чрезвычайном судопроизводстве классический институт полной апелляции, в результате чего апелляционное обжалование рассматривалось как просьба к вышестоящей судебной инстанции пересмотреть обстоятельства дела. Для обжалования был установлен конкретный срок; вследствие установления строгой иерархии судебной системы было ограничено количество апелляционных инстанций. Обжалование происходило по определённой юридической процедуре; допускалось встречное обжалование; апелляционная инстанция являлась судом, повторно рассматривающим дело по существу в полном объёме; апелляционный суд выносил новый судебный акт, разрешающий спор.

Введение института апелляции было обусловлено централизацией государственной власти. Следовало установить надзор вышестоящей судебной инстанции над решениями судебных органов и обеспечить возможность обжаловать судебный акт в случае несогласия с ним. При этом иерархичность судебной системы, т. е. наличие вышестоящих судебных инстанций, стала важнейшей предпосылкой осуществить право на обжалование. Однако в начальный период судебный пересмотр был возможен и в отсутствие судебной иерархии.

Ключевые слова – *судебное пересмотрение, римское право, легисакционное производство, формулярное производство, чрезвычайное производство, иерархичность судебной системы, экстраординарное производство, апелляционная жалоба, полная апелляция, апелляционная инстанция, запрет на поворот к худшему, протоколирование судебного заседания*

VAHE HOVHANNISYAN – *Functioning of the Legal Institute on Judicial Act Review (Appeal) in Ancient Roman Law.* –The analysis of mechanisms on protection of subjective rights, including the peculiarities of the institute on judicial review in Roman Legal System at different periods of its historical development, (754-242 BC-period of establishment of magistrates and praetors in Roman Law; 242 BC- 212 AD-period of Praetorian or Classical Roman Law of slave-owning state (The Republic), 212-565 AD- period of establishment of the centralized authority, the Monarchy and common emperor’s right or post-classical period) are presented in the article. The article also reveals the main issues in regard to the appellate review of judicial acts.

The author demonstrates that the introduction of judicial system of different instances in extraordinary litigations in ancient Rome led to the formation of the classic legal institute on entire review in its contemporary legal perception. In particular, the classical entire review in ancient Rome had the following features: bringing an appeal was considered as a request for the superior court to review all the actual and legal circumstances of the case; a fixed period for bringing an appeal was determined; the number of the appellate instances was restricted due to the existence of strict judicial system hierarchy (each case should have been examined at no more than three instances); bringing an appeal had to be done in accordance with certain legal proceedings; bringing an appeal against the legal act of the court of first instance prevented its legal enforcement; bringing a cross-action against the initial action was allowed. Factually, the appellate instance was a sort of court which had a power to re-examine the case in essence and entirely and as a result, the appellate court uphold a new ruling in essence.

The introduction of the institute of appeal was caused by the necessity (as a result of centralized state power) to establish supervision by superior judicial instance over the judgements of judicial instances. One of the goals of such a solution was also the need to provide people with an opportunity to bring an appeal in case they do not agree with the ruling hence opening a room for the establishment of a new and higher instance in case of mistrust of population towards courts. Meanwhile, the existence of superior court or the existence of courts of different instances were the essential preconditions both for the review of judicial acts and for the right to bring an appeal against a ruling. However, the existence of the institute on judicial review cannot be explained solely by the above-mentioned fact. At the beginning, the judicial review could be made in both cases; no matter whether there were different instances of courts or not.

Key words – *judicial review, Roman law, per legis actions, cognito per formulas, emergency proceedings, hierarchy of the judicial system, extraordinary litigations, appeal, total appeal, the appeals instance, ban on turn to the worse, recording of the court*